ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2020թ. թիվ_____/Ա/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից մինչև ուսումնառության ավարտը տալ տարկետում՝

1) Հովհաննես Գևորգի Կոշեցյանին՝ ծնված 2001 թվականի հուլիսի 10-ին (հաշվառման վայրը՝ ք.Երևան, Սիլիկյան թղմ., Հին Խճուղի 57/9 տուն), սովորում է Երևանի թիվ 108 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում, ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի հունիսի 30-ը.

2) Սահակ Անդրանիկի Ավագյանին՝ ծնված 2001 թվականի ապրիլի 8-ին (հաշվառման վայրը՝ ք.Երևան, Սարիթաղ, փողոց 5, 31 տուն), սովորում է Երևանի թիվ 47 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում, ուսումնառության ավարտը՝ 2022 թվականի հունիսի 30-ը.

3) Արտյոմ Արթուրի Ղազարյանին՝ ծնված 2001 թվականի փետրվարի 24-ին (հաշվառման վայրը՝ ք.Երևան, Նորք, Ս.Խանզադյանի փողոդ, 56 տուն), սովորում է Երևանի թիվ 127 ավագ դպրոցի 11-րդ դասարանում, ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի հունիսի 30-ը,

4) Համլետ Արթուրի Սարգսյանին՝ ծնված 2001 թվականի մայիսի 12-ին (հաշվառման վայրը՝ ք.Երևան, Ն.Զարբախ 12 փողոց, 23 տուն), սովորում է Երևանի «Հայբուսակ»

համալսարանի ավագ դպրոցում (տեղափոխվել է 12-րդ դասարան), ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի հունիսի 30-ը.

5) Հայկազ Արթուրի Եսայանին՝ ծնված 2001 թվականի հունվարի 9-ին, (հաշվառման վայրը՝ ՀՀ Արարատի մարզ, գյուղ Խաչփար, 19-րդ փողոց, 11 տուն), սովորում է ՀՀ Արարատի մարզի Խաչփարի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում, ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի հունիսի 30-ը.

6) Ռուբեն Մանվելի Մովսիսյանին՝ ծնված 2001 թվականի օգոստոսի 30-ին, (հաշ-վառման վայրը՝ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Ս.Գրիգորյանի փողոց, 10ա շենք, 18 բն.), սովորում է ՀՀ Շիրակի մարզի Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի 3-րդ կուրսում, ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի հունիսի 30-ը.

7) Վահագն Վաչագանի Խաչատրյանին՝ ծնված 2001 թվականի մարտի 15-ին, (հաշ-վառման վայրը՝ ք. Երևան, Շարուրի փողոց, 10/25 տուն), սովորում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի Երևանի քոլեջի 3-րդ կուրսում, ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի փետրվարի 26-ը.

8) Արտուր Սամվելի Դավթյանին՝ ծնված 2001 թվականի նոյեմբերի 6-ին (հաշվառման վայրը՝ ք.Երևան, Նոր նորքի զնգվ., 10 շենք, 36 բն.), սովորում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի Երևանի քոլեջի 3-րդ կուրսում, ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի փետրվարի 26-ը.

9) Կարեն Ռուդիկի Հովհաննիսյանին՝ ծնված 2001 թվականի մարտի 27-ին, (հաշ-վառման վայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան փողոց, 38 շենք, 3 բն.), սովորում է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի 3-րդ կուրսում, ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի փետրվարի 28-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության որոշման նախագծում նշված ՀՀ քաղաքացիները սովորում են Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով և չեն ավարտել պարտադիր հանրակրթական ծրագիրը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հովհաննես Գևորգի Կոշեցյանը, Արտյոմ Արթուրի Ղազարյանը, Համլետ Արթուրի Սարգսյանը, Հայկազ Արթուրի Եսայանը, Ռուբեն Մանվելի Մովսիսյանը ուսումնառությունը ավարտելու են 2021 թվականի հունիսի 30-ին, Վահագն Վաչագանի Խաչատրյանը և Արտուր Սամվելի Դավթյանը ուսումնառությությունը ավարտելու է 2021 թվականի փետրվարի 26-ին, Կարեն Ռուդիկի Հովհաննիսյանը ուսումնառությունը ավարտելու է 2021 թվականի փետրվարի 28-ին, Սահակ Անդրանիկի Ավագյանը ուսումնառությունը ավարտելու է 2022 թվականի հունիսի 30-ին:

Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասը՝ առաջարկում եմ վերոհիշյալ ՀՀ քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից տալ տարկետում:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունումը թույլ կտա վերը նշված ուսանողներին ստանալ պարտադիր հանրակրթական կրթություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական եկամուտներում ու ծախսերում փոփոխություն չի առաջացնի:

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության պետի պարտականությունները կատարող՝

Արսեն Բաղդասարյան

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1	ՀՀ պաշտպանության նախարարություն 24.06.2020թ. N ՊՆ/01/1990-2020	ՀՀ կառավարության նախագծում. 1. նախագծի 1-ին կետի 6-րդ ենթակետում նշված Թելման Անաստասի Իսկանդարյանին (ծնվ.՝ 05.11.2001թ., ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Շիրակի ՏՍ) ՀՀ կառավարության որոշմամբ տարկետում չի կարող տրամադրվել, քանի որ 2019թ. ձմեռային զորակոչի ժամանակ նրան տրվել է օրենքով սահմանված տարկետում 3 տարի ժամկետով՝ մինչև 2022թ. ձմեռային զորակոչը, **2.** 7-րդ ենթակետում նշված Ֆերդինանդ Աշոտի Մխիթարյանին (ծնվ.՝ 26.10.2001թ., ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Շիրակի մարզի ՏՍ) 2019թ. ձմեռային զորակոչի ժամանակ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հիմքով տրվել է տարկետում՝ մինչև 2020թ. ձմեռային զորակոչը	Ընդունվել է Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն
2.	ՀՀ արդարադատության նախարարություն 17.07.2020թ. N 01/27.1/15702-2020	ՀՀ կառավարության նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:	Ընդունվել է	